ԱՐՏԱՇԵՍ ՎՐՈՒՅՐԻ ԱՐԽԻՎԸ

Հայ լուսանկարչական արվեստի ուրույն ճյուղերից է պատմական հուշարձանների լուսագրումը, որն ունի շուրջ մեկդարյա պատմություն և իր սկզբնավորմամբ պարտական է Հարությունն Քյուրջյանին։ Այդ տաղանդավոր լուսանկարիչը 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, ծառայելով ռուսական բանակում, եղավ միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիում է ըստ արժանավույն գնահատելով նրա հրաշակերտ ճարտարապետական կոթողները, որոշեց պատմական ժամանակ լուսանկարել դրանք։ 1880-ական թվականների հենց սկզբներին նա կրկին այցելեց ռուսական տիրապետության տակ անցած Անի, այնտեղ կատարեց բազմաթիվ լուսագրումներ և ապա դրանց մի մասը հրատարակեց։ Սակայն հայկական հարտարապետական հուշարձանների լուսագրմանը Հարությունն Քյուրջյանի մատուցած ծառայությունները դրանով չեն սահմանափակվում։ 1881 թ. նրան աշակերտելու եկավ Արամ Վրույրը (1863—1924), որի անվան հետ է կապված իր ուսուցչի հայրենանվեր ձեռնարկի հետագա զարգացման պատիվը։ Հայ թեմի այդ անխոնջ մշակը՝ տաղանդաշատ արվեստագետը, գրական-հասարակական գործիչն ու հնագետ-լուսանկարիչը, որի դերը հայ թատրոնի զարգացման գործում զգալի է, իր ողջ գիտակից կյանքում զուգորդեց թատրոնն ու հայ հարտարապետական հուշարձանների լուսագրումը, անջնջելի հետք թողնելով հայ արվեստի թե՛ մեկ և թե մյուս բնագավառներում։

Նկ. 1. Տիգնիս (Արամ Վրույր, 1915 թ.)։

Լուսանկարչական աշխատանքներն Անիում սկսելով տակավին 1886 թ., Արամ Վրույրն այնուհետև դարձավ ակադեմիկոս Ն. Մառի ղեկավարությամբ միջնադարյան Հայաստանի քաղաքամայրը պեղող արշավախմբի (Հ. Օրբելի, Տարագրոս, Ա. Լոռու-Մելիք Քալանթար, Թ. Թորամանյան, Լ. Քալանթար, Ն. Տոկարսկի, Ն. Բունիաթյան, Գ. Զուրինաշվիլի և ուրիշ-

ներ) հնագետ-լուսանկարիչը և տարիներ շարունակ (1901—1915) լուսանկարեց թե՛ հայկական ճարտարապետության Անիում ու նրա շրջակայքում գտնվող հրաշալիքները և թե պեղումների հետևանքով ի հայտ եկած նյութական մշակույթի հուշարձանները։ Ինչպես դեռ 1903 թ. գրել է Լեոն, «...Քյուրքյանից հետո ոչ ոք այնքան շատ բան չէ արել Անին լուսանկարելու կողմից, որքան արել է դերաան Ա. Վրույրը։ Նա սիրող-լուսանկարիչ է

Նկ. 2. Բագնայրի եկեղեցիներից մեկի արևմտյան ճակատի և դավթի սյունաշարը (Արամ Վրույր)։

և առանձնապես սիրում է հնությունները, իսկ ամենից շատ, իհարկե, Անին... Քյուրքյանը հրատարակեց հիսունից ոչ ավել լուսանկարներ, իսկ պ. Վրույրը մենակ, առանց օգնականների և մանավանդ առանց նյութական աջակցության, որ գործի ամենակարևոր կողմն է, հանել է երկու հարյուր տեսարան, որոնցից հարյուրը արդեն հրատարակել է։ Հայ բեմի այդ համեստ և, ինչ ասել կուզի, չքավոր գործիչը, կարելի է ասել, Անիի մեջ և Անիի շուրջը ոչինչ անծանոթ բան չէ թողել, այնպես որ նրա ժողովածուն ավերակների մայրաքաղաքի (Անիի—Ա. Շ.) լիակատար, ամենամանրամասն տեսարանացույցը պիտի դառնա» (Լեո, Անի, Երևան, 1963, էջ 65—66)։ Իսկ հաշվի առնենք, որ այս խոսքերը գրվելուց հետո դեռ երկար տարիներ Արամ Վրույրը լուսանկարեց Անին, նրա շրջակայքի և Արևմտյան Հայաստանի բազմաթիվ հուշարձաններ, ապա պարզ կդառնա, թե նա ինչպիսի հայրենանվեր ու տքնաջան աշխատանք է կատարել հայ ազգային ճարտարապետական հուշարձանների պրոպագանդման գործում։ Ավելին, լրավարարվելով արվածով, նա մեծ Հայրենականում զոհված որդու՝ Արայի, հետ 1915 թ. լուսանկարեց Հին Ջուղայի միջնադարյան գերեզմանոցի հարյուրավոր գեղաքանդակ խաչքարերը և գրեց առանձին հոդված՝ նվիրված դրանց քննությանը։ Ահա թե ինչ է ասել նա իր լուսանկարչական գործունեության շարժառիթների մասին. «արժե սովորել այն ամենը, ինչ որ մեզ մոտեցնում է անցյալին, վերակենդանացնել այն, և պատմական անունները ներկայացնել մեզ ոչ իբրև մեռյալ անուններ, այլ իբրև կենդանի մարդիկ։ Արժե սովորել այն ամենը, ինչ հնարավորություն է տալիս մեզ տեսնել այդ պատմության կենդանացած անձանց հոգու խորքը։ Արժե գիտենալ այն բոլորը, ինչ օգնում է մեզ ավելի մոտիկից ըմբռնել, որ մենք երբեք կտրված չենք մինչև իսկ ամենահեռավոր անցյալից, որ մենք՝ նրանց ուղղակի ժառանգներս, չվճարված պարտքեր ունինք վճարելու, և մենք պարտական ենք մեր շնորհակալության պարտականություններ նրանց, որոնց համար երկրային վարձատրություն այլևս գոյություն չունի։ Մենք նրա համար ենք ապրում, որպեսզի շարունակենք հազար տարիներ առաջ սկսված աշխատանքը և որպեսզի մեր այդ աշխատանքը գիտակցաբար և արժանավոր կերպով կատարվի» (Արտաշես Վրույր, Անիում, Երևան, 1979, էջ 14)։ Սրանք խոսքեր են, որոնք բնութագրում են իսկական արվեստագետին ու մեծ քաղաքացուն, այն մարդուն, որը բարձր էր գնահատում հայ ժողովրդի դարավոր մշակույթը, զգում նրա պահպանման ու զարգացման անհրաժեշտությունը և ձգտում այդ հայրենանվեր գործում ներդնել իր ողջ ուժերն ու կարողությունը։

Դժբախտաբար, Արամ Վրույրի լուսանկարչական ժողովածուն ամբողջությամբ մեզ չի հասել։ Նրա մի մասը, որ Արամ Վրույրը 1909 թ. տարել էր Կ. Պոլիս. հանգամանքների բերումով այդպես էլ մնաց այնտեղ ու կորավ, իսկ մի մասն էլ անհայտացավ 1917 թ.՝ Անիի գիտարշավի բազմաթիվ նյութերի հետ միասին։ Մեկ վագոն կազմող այդ նյութերը, որոնք Թբիլիսի էին ուղարկվել տեղի պատմահնագիտական ինստիտուտում վերամշակելու նպատակով, այդպես էլ տեղ չհասան և ճանապարհին ինչ-որ տեղ կորան։ Այդուհանդերձ. տառանդավոր հնագետ-լուսանկարչի ժողովածուի որոշ նյութեր հասել են մեզ։ Դրանց, ինչպես և իր որդիների լուսագրումների մի մասը պահվում է ՍՍՀՄ ԳԱ հնագիտության ինստիտուտի լենինգրադյան բաժանմունքի ֆոտո-արխիվում, Հայաստանի պատմության պետական թանգա-

բանում. ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առըն-թեր պատմության և կուլտուրայի հուշարձան-ների պահպանման ու օգտագործման վարչու-թյունում, ՀՍՍՀ ճարտարապետների միությու-նում, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության ու ազգագրու-թյան ինստիտուտում, ճարտարապետ Մ. Մաղ-մանյանի անձնական արխիվում։ Մնացած նյութերը մեզ են հասել շնորհիվ Արամ Վրույ-րի կրտսեր որդու՝ Արտաշես Վրույրի և իրենց արժանի տեղն են գրավում նրա անձնական հարուստ արխիվում։

Արտաշես Վրույրը, մանկության և պատա-նեկության տարիներին լինելով Անիում, նախ եղել է պեղումների ականատեսը, իսկ հետո՝ ակտիվ մասնակիցը։ Նա 1915 թ. Անին պեղող գիտարշավի տեխնիկական բանվորն էր, իսկ 1916—1917 թթ.՝ լուսանկարիչը, դրանով իսկ իր շոշափելի լուման ներդնելով քաղաքամայր Անիի հետազոտման շնորհակալ գործում։ Այժմ այդ օկրտսեր անեցին» հայոց քաղաքամայրը պեղող գիտարշավի միակ կենդանի մասնա-կիցն է։

Հոր նման Արտաշես Վրույրն իր ողջ կյան-քը նվիրել է հայ թատրոնին ու պատմական հուշարձանների լուսանկարչությանը, արժանա-ցել ՀՍՍՀ վաստակավոր արտիստի կոչման և լուսագրել հայ ազգային ճարտարապետու-թյան բազմաթիվ հուշարձաններ թե՛ մեր հան-րապետությունում և թե նրա սահմաններից դուրս։ Այդ լուսագրումների արդյունքն են այն հարուստ նյութերը, որոնք պահվում են Ար-տաշես Վրույրի անձնական արխիվում։ Այն-տեղ իրենց արժանի տեղն ունեն Կարսի շրջա-

Նկ. 3. Իգաձորի ավերակ եկեղեցու հյուսիսային պատը և պարիսպները (Հ. Քյուրքչյան, 1880-ական թվականներ)։

նի պատմական հուշարձանների լուսանկարնե-րի թվով 424 նեգատիվները։ Դրանց թվում են 333 նեգատիվ Անիից, որոնցից 30-ը՝ ներկա-յացնում են Թ. Թորամանյանի գծագրերը, 29-ը՝ Հ. Քյուրքչյանի կողմից 1880-ական թվական-ներին կատարված լուսագրումները, իսկ մնա-ցածը՝ 1886—1917 թթ. Անիում և նրա շրջա-կայքում Արամ և Արտաշես Վրույրների կա-տարած լուսանկարահանումների նեգատիվներն են։ Կարսի շրջանի պատմական հուշարձաննե-րը պատկերող 91 նեգատիվներից 18-ը ներ-կայացնում են Տեկորը, 23-ը՝ Խծկոնքը, 5-ը՝ Բագնայրը, 2-ը՝ Մրեևը, 20-ը՝ Հոռոմոսը (Խո-շավանք), 5-ը՝ Տիգնիսը, 4-ը՝ Արդինան, 13-ը՝ Շիրակավանը և 1-ը՝ Կարսը։

Արտաշես Վրույրի արխիվի արժեքավոր նյու-թերից են Հին Ջուղայի գերեզմանոցի խաչքա-րերի 115 լուսանկարչական նեգատիվները։ Այն-տեղ են պահվում նաև Թ. Թորամանյանի և Ն. Բունիաթյանի՝ Անիում կատարած որոշ լուսագրումների նեգատիվների կա՛մ բնօրի-նակները, կա՛մ էլ կրկնօրինակները։ Այս ար-ժեքավոր արխիվի նյութերի մեծ մասն են կազ-

Թյան ինստիտուտում, ճարտարապետ Մ. Մաղ-մանյանի անձնական արխիվում։ Մնացած նյութերը մեզ են հասել շնորհիվ Արամ Վրույ-րի կրտսեր որդու՝ Արտաշես Վրույրի և իրենց արժանի տեղն են գրավում նրա անձնական հարուստ արխիվում։

Նկ. 4. Խծկոնք, ընդհանուր տեսքը (Հրամ Վրույր, 1904 թ.)։

Նկ. 5. Խծկոնք, ս. Մարդիս եկեղեցին (անհայտ հեղինակ, 1960-ական թվականներ)։

Նկ. 6. Գեղարդի ավպանով ժայռափոր եկեղեցին (Արտաշես Վրույր, 1930 թ.)։

մում մեր հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և Թեոդոսիայի հայկական ճարտարապետական հուշարձանների լուսանկարչական նեգատիվները, որոնց հեղինակն է Արտաշես Վրույրը։ Դրանցից 60-ը պատկերում են Լեռնային Ղարաբաղում, 13-ը՝ Թեոդոսիայում, իսկ 1308-ը՝ Սովետական Հայաստանում եղած կոթողները (վերջիններս ներկայացված են նաև 24×36 մմ չափի 290 նեգատիվներով)։

Արխիվի նյութերը ներկայացնում են նաև հայ թատերական կյանքը (212 նեգատիվ) և հայ ազգագրությունը (34 նեգատիվ)։ Սակայն բազմավաստակ լուսանկարչի արխիվի նյութերը թվարկվածով չեն սահմանափակվում։ Դրանք նրա կողմից դեռևս խնամքով ցուցակագրվում և դասդասվում են։

Եթե նկատի առնենք այն, որ հայկական ճարտարապետության որոշ կոթողներ շարունակում են գոյատևել միայն շնորհիվ Արտաշես Վրույրի արխիվում պահվող նյութերի, իսկ մի շարք հուշարձաններ էլ մատչելի չեն հետազոտողին, ապա սույն արխիվի նյութերի գիտաճանաչողական արժեքը դժվար է գերագնահատել։ Այս ամենի արձանագրմամբ դժվար է հաշտվել այն մտքի հետ, որ պատշաճ ուշադրության բացակայության դեպքում մոտ ապագայում կգրկվենք նաև դրանցից։ Բանն այն է, որ լուսանկարչական ամենաորակյալ նեգատիվներն անգամ օապրումա են 50—60 տարուց ոչ ավելի, մինչդեռ արխիվի՝ Անիի ու Կարսի շրջանին վերաբերող նյութերի ժամանակը 50—100-ի է հասնում։ Այդ խիստ անցանկալի հեռանկարից

Նկ. 7. Հատված Հին Ջուղայի միջնադարյան գերեզմանոցից։ Խաչքարին հենվածը Արա Վրույրն է (Արամ Վրույր, 1915 թ.)։

խուսափելու նպատակով Արտաշես Վրույրը նեգատիվները պատել է մատոիդինով։ Սակայն դա հարցի լուծում չէ և հարկավոր է շտապ կարգով ձեռքի տակ ունենալ գոնե ամենաարժեքավոր նեգատիվների կրկնօրինակները։ Դա հնարավոր կլինի միայն համապատասխան կազմակերպությունների օգնության պայմանով։

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ